

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ
ՔԱՐՏԻ ԼՐԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Քրեակատարողական հիմնարկներում արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստացող կալանավորված անձի կամ դատապարտյալի (այսուհետ նաև՝ պացիենտ)՝ սույն հրամանի հավելված N 1-ով սահմանված կալանավորված անձի/դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտը (այսուհետ նաև՝ բժշկական քարտ) լրացվում է բժշկի կողմից՝ սույն կարգի համաձայն:

2. Բժշկական քարտը լրացվում է գրական հայերենով, ընթեռնելի և պարզ:

3. Բժշկական քարտում լրացված տեղեկությունները պետք է լինեն հավաստի և ժամանակագրական առումով ճշգրիտ:

4. Բժշկական քարտը լրացվում է առանց ջնջումների: Սպիտակեցնող կամ այլ բնույթի նյութեր չեն կարող օգտագործվել սխալները, վրիպակները կամ ցանկացած այլ լրացված տեղեկությունները չեղարկելու համար:

5. Բժշկական քարտում սխալ լրացված բառը չեղարկվում է՝ համապատասխան բառի վրա գիծ քաշելու միջոցով: Սխալ լրացված բառի փոխարեն լրացվում է ճիշտ տարբերակը: Քարտը լրացնող բժիշկը ճիշտ տարբերակի մոտ կատարում է նշում՝ «Ուղղումն իմ կողմից է» բովանդակությամբ, և ստորագրում :

6. Բժշկական քարտում լրացման ենթակա բաժինները և տողերն լրացվում են՝ ըստ սույն կարգում սահմանված հաջորդականության:

2. ԲԺՇԿԱԿԱՆ ՔԱՐՏԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՊԱՑԻԵՆՏԻՆ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼԻՍ

7. Քրեակատարողական հիմնարկի ամբուլատոր օղակի բժիշկը լրացնում է բժշկական քարտի համապատասխան տողերը՝ հետևյալ կարգով.

1) «Դիսպանսերային նշում» տողի առջևում դրված վանդակին որպես **ճանաչողական չափանիշ** տրվում է գունային տարբերանշան:

2) «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում տեղակայված համապատասխան ստորաբաժանման անվանումը» տողում լրացվում է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում տեղակայված համապատասխան ստորաբաժանման անվանումը, իսկ «Քրեակատարողական բժշկության կենտրոն»

ՊՈԱԿ-ի՝ այլ ստորաբաժանում տեղափոխման դեպքում կատարել նշում» տողը լրացվում է պացիենտի՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ այլ ստորաբաժանումներ տեղափոխման դեպքում:

3) «**Կալանավորված անձի կամ դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտ N**» տողում նշվում է բժշկական քարտի համարը, ընդ որում՝ համարակալումն իրականացվում է հետևյալ կարգով՝ սկզբում դրվում է քարտի հերթական համարը, այնուհետև՝ գծիկ և տարեթիվ (օրինակ՝ 1-20, 2-20, 3-20 և այլն):

4) Այնուհետև լրացվում են պացիենտի՝

ա. ազգանունը, անունը, հայրանունը,

բ. ծննդյան թիվը,

գ. Պացիենտի՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում տեղակայված համապատասխան ստորաբաժանումում հաշվառման օրը (լրացուցիչ տողերը լրացվում են ըստ անհրաժեշտության):

8. «**Արձանագրային տեղեկություններ**» բաժնում լրացվում են՝

1) պացիենտի ազգանունը, անունը, հայրանունը,

2) ծննդյան օրը, ամիսը, տարին,

3) հաշվառման վայրը,

4) փաստացի բնակության վայրը (տեղեկատվության առկայության դեպքում),

5) կրթությունը,

6) բժշկական քարտի լրացման ամսաթիվը, ամիսը, տարին,

7) հաջորդիվ աղյուսակում լրացվում են՝

ա. բժշկական սպասարկման բաժնի բժշկի ազգանունը, անունը, հայրանունը,

բ. «**Հաշվառման համար**» սյունակում՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի հաշվառման հերթական համարը,

գ. «**Գրանցման օրը, ամիսը, տարին**» սյունակում՝ ամբուլատոր օղակում գրանցման օրը, ամիսը և տարին,

դ. «**Համակարգչային գրանցման համարը**» սյունակում՝ տվյալների մուտքագրման էլեկտրոնային համակարգի առկայության դեպքում մուտք անելիս համակարգի կողմից տրամադրվող հերթական համակարգչային գրանցման համարը (նշված սյունակը լրացվում է էլեկտրոնային համակարգի առկայության դեպքում),

ե. «**Տրվել է հաշմանդամության խումբ**» տողում լրացվում է հաշմանդամության համապատասխան խումբը, տրման ամսաթիվը և ժամկետը:

9. «**Ընդհանուր տեղեկություններ**» բաժնում նշվում են՝

1) պացիենտի արյան խումբը և ռեզուս-պատկանելությունը,

2) դեղերի նկատմամբ կողմնակի ազդեցությունը (հակացուցված դեղեր)՝ պացիենտի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն,

3) այլ հակացուցումները,

4) ստացած արյան փոխներարկման ժամկետները և քանակը,

5) պացիենտի կողմից տարած վիրահատական միջամտությունները,

6) տարած տարափոխիկ հիվանդությունները:

10. «Դիսպանսերային հսկողություն» բաժինը լրացվում է այն ժամանակ, երբ պացիենտը վերցվում է դիսպանսերային հսկողության՝ բուժական կանխարգելիչ օգնություն ցուցաբերելու և (կամ) քրոնիկ հիվանդների դեպքում դիսպանսերային շարունակական հսկողության ապահովման համար: Աղյուսակում լրացվում են.

- 1) հաշվառման վերցնելու օրը, ամիսը, տարին,
- 2) ախտորոշումը,
- 3) հաշվառումից հանելու օրը, ամիսը, տարին,
- 4) հանելու պատճառը:

11. «**Գրանցումներ տեղափոխությունների մասին**» աղյուսակում լրացվում են՝

1) «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում տեղակայված համապատասխան ստորաբաժանման անվանումը,

2) պացիենտը տվյալ ստորաբաժանում երբ է տեղափոխվել և երբ է գնացել:

12. «**Համառոտ տեղեկություններ տարած հիվանդությունների և վնասվածքների մասին**» բաժնում ըստ պացիենտի ներկայացված տվյալների, նկարագրվում է կյանքի ընթացքում կրած հիվանդությունները, այդ թվում՝ մանկական տարիքում ունեցած հիվանդությունները, ինֆեկցիաները, դրանց տևողությունը, բարդությունները, ինչպես նաև ստացած բուժումները յուրաքանչյուր հիվանդության դեպքում, պատվաստումներ ստացել է, թե ոչ, վերջին պատվաստման ժամկետը և այլն: Պարտադիր նշվում են հակացուցումների վերաբերյալ տեղեկություններ (սննդից, դեղերից և այլն), ժառանգական նախատրամադրվածությունը: Հստակ նկարագրվում և լրացվում է հիվանդության սկիզբը, ընթացքը՝ սուր կամ փոփոխվող ախտանիշների առաջացման հաջորդականությունը, ստացած բուժումը՝ դեղը, դեղաչափը, տևողությունը և կատարված միջամտությունները:

13. «Առաջնային բժշկական գննություն» բաժնի լրացուցիչ էջերը լրացվում են պացիենտի՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական այլ հիմնարկում տեղակայված համապատասխան ստորաբաժանում տեղափոխման դեպքում:

14. Բժիշկը.

1) «**Գանգատներ**» բաժնում լրացնում է պացիենտի կողմից ներկայացվող գանգատները՝ իր առողջական վիճակի հետ կապված,

2) «**Կյանքի և հիվանդության պատմություն**» բաժնում լրացվում է պացիենտի կյանքի ընթացքում կրած հիվանդությունների և հիվանդության վերաբերյալ ներկայացվող տեղեկությունները,

3) «**Օբյեկտիվ քննության տվյալներ**» բաժնում նշվում է հիվանդի քաշը, հասակը, ջերմաստիճանը, արյան զարկերակային ճնշումը, շաքարային դիաբետի առկայության դեպքում նշվում է նրա տեսակը, ծխախոտ օգտագործելու վերաբերյալ տվյալներ, ժառանգական նախատրամադրվածությունը: Մաշկ, ենթամաշկ, տեսանելի լորձաթաղանթներ, այտուցները, շոշափվող ավյանի հանգույցները, ոսկրամկանային

համակարգի և հողերի ուսումնասիրության արդյունքները, քիթ-կոկորդ-ականջ, շնչառական, սիրտ-անոթային, մարսողական, միզասեռական, նյարդային և էնդոկրին համակարգերի հետազոտության արդյունքները, ինչպես նաև տեսողության ստուգման արդյունքները: Կանանց համար նշվում է նաև դաշտանադադարի անամները:

Վերջում նշվում է պացիենտի հիմնական ախտորոշումը, ընթացիկ բարդությունները և ուղեկցվող հիվանդությունները: Տողը լրացվում է պացիենտի ընդունելու պահից 1-2 աշխատանքային օրերի ընթացքում: Եթե բուժման ընթացքում կլինիկական ախտորոշումը փոփոխվել է, ապա դրա մասին նշվում է բժշկական քարտում:

15. **«Ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները»** աղյուսակում նշվում են հետազոտության իրականացման օրը, ամիսը, տարին, իրականացված հետազոտության անունը և արդյունքները:

16. **«Տեղեկություններ հիվանդանոցային բուժման վերաբերյալ»** աղյուսակում լրացվում են պացիենտի հերթական հոսպիտալացման օրը, ամիսը, տարին, վայրը, բուժհաստատության անվանումը, ուր հոսպիտալացվել է, ախտորոշումը, որով հոսպիտալացվել է: **«Լրացուցիչ տեղեկություններ»** սյունակում լրացվում են հոսպիտալացման վերաբերյալ կարևոր տեղեկատվությունը՝ հոսպիտալացման օրը, դուրսգրման օրը, հիվանդության ընթացքի առանձնահատկությունները, բուժումը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

17. **«Ամբուլատոր օգնություն (ներառյալ մասնագետների խորհրդատվությունը)»** բաժինը լրացվում է բժշկի կողմից:

18. **«Ամբուլատոր օգնություն (ներառյալ մասնագետների խորհրդատվությունը)»** բաժինը լրացնելիս պահպանվում է ճշգրիտ ժամանակագրությունը և արտացոլում է պացիենտի վիճակի դինամիկան և կատարվող նշանակումները: **«Ամբուլատոր օգնություն (ներառյալ մասնագետների խորհրդատվությունը)»** բաժնի **«Հաճախման ամսաթիվ»** սյունակում լրացվում է գրառում կատարելու օրը, ամիսը, տարին, որին համապատասխանող սյունակում լրացվում են տվյալներ հիվանդության ընթացքի, և ախտորոշման վերաբերյալ վերաբերյալ:

«Նշանակումներ և բժշկի ստորագրություն» սյունակում համապատասխանաբար գրառումներն են կատարվում՝ բավարար վիճակում գնահատվող հիվանդի դեպքում՝ առնվազն յուրաքանչյուր օր, միջին ծանրության, ծանր վիճակում գնահատվող և գտնվող հիվանդի դեպքում՝ յուրաքանչյուր օր առնվազն 2 անգամ, իսկ ծայրահեղ ծանր վիճակում գնահատվող հիվանդի դեպքում՝ յուրաքանչյուր օր՝ առնվազն 4 ժամը մեկ: Լրացվում է գրառման ամսաթիվը, ժամը, հիվանդի ջերմաստիճանի և զարկերակի ցուցանիշները, շնչառությունը, հիվանդի գանգատները: Ստորագրվում է բուժող բժշկի կողմից՝ նշելով օրը, ամիսը, տարին:

19. **«Դիսպանսեր հսկողություն (ներառյալ մասնագետների խորհրդատվությունը)»** բաժինը լրացվում է, եթե հիվանդը վերցվել է դիսպանսեր հսկողության՝ սահմանված չափորոշիչներին համապատասխան իրականացված դիսպանսերային հսկողության համար անհրաժեշտ այցերի և հետազոտությունների

ժամանակ: Լրացվում է գրառման ամսաթիվը, ժամը, հիվանդի ջերմաստիճանի և զարկերակի ցուցանիշները, շնչառությունը, դիսպանսերային հսկողության համար ցուցված համապատասխան հետազոտության արդյունքները: Ստորագրվում է բուժող բժշկի կողմից՝ նշելով օրը, ամիսը, տարին:

20. «**Ստոմատոլոգիա**» բաժինը լրացվում է ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկի կողմից: Պացիենտի առաջին զննության ժամանակ լրացվում են տվյալ բաժնի պացիենտի վիճակը, բերանի խոռոչի զննման տվյալները ըստ ատամների բանաձևի, նշվում կծվածքի ձևը, պրոթեզի կոնստրուկցիայի առկայությունը և ատամների վիճակը (ատամնափույտ, քայքայված, բուժված, արհեստական, շապիկներ և բացակա ատամները):

Այնուհետ համապատասխան աղյուսակում յուրաքանչյուր անգամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս նշվում է օրը, ամիսը, տարին, ախտորոշումը, իրականացված բուժումը:

Յուրաքանչյուր բուժման վերաբերյալ գրառումից հետո բժիշկը ստորագրում է:

21. «**Հանձնաժողովային կարգով զննության արդյունքները**» բաժինը լրացվում է բժշկի կողմից:

22. Բժշկական քարտի «**Կանխարգելիչ պատվաստումներ**» բաժնում լրացվում է համապատասխանաբար պատվաստման օրը, ամիսը և տարին, թե ինչի դեմ է պացիենտը պատվաստվել, ինչ պատվաստանյութով (սերիա) և քանակը:

23. Բժշկական քարտի «**Տուբերկուլյոզի հայտնաբերման թերթ**» բաժինը լրացվում է համապատասխան լաբորատոր հետազոտությունների արդյունքների հիման վրա:

24. Բժշկական քարտի նախավերջին էջում համարակալվում և կցվում են լաբորատոր և գործիքային հետազոտությունները, ինչպես նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման և դեպքերի արձանագրման ձևերը:

25. Բժշկական քարտի վերջին էջում փակցվում են հերթական համարակալված նոր էջեր՝ բժշկական քարտում զետեղված բաժինների լրացուցիչ լրացման անհրաժեշտության դեպքում: